



**«ՎԱՆԱՃՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ  
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 22-Լ**

16 դեկտեմբերի 2019 թվականի

**«ՎԱՆԱՃՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 64-րդ հոդվածով և 42-րդ կետի 15-րդ ենթակետով և ՎՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 7-րդ կետի 15-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ. օգոստոսի 15-ի 1054-Ն «Հայաստանի Հանրապետության 2019թ. պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. դեկտեմբերի 27-ի N 1515 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման 3-րդ կետը՝ «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը ձեռնարկել համապատասխան միջոցներ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ գործող կազմակերպությունների անվանումները, կանոնադրությունները և անհատականացման միջոցները «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019թ. մայիսի 8-ի ՀՕ-31-Ն օրենքից բխող փոփոխություններին համապատասխանեցնելու ուղղությամբ» ՎՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

- 1. ՎՊՀ կանոնադրության 4-րդ կետում «Կրթության և գիտության նախարարություն» բառերը փոխարինել «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն» բառերով:**

Ղեկավարվելով «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 64-րդ հոդվածով և 42-րդ կետի 15-րդ ենթակետով և ՎՊՀ հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 7-րդ կետի 15-րդ ենթակետով, հիմք ընդունելով «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2016թ. դեկտեմբերի 16-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը՝ ըստ որի «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածը վերաշարադրվել է հետևյալ կերպ. «Օրենքի 38-րդ հոդվածում՝ 1-ին մասի «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն» բառերով» ՎՊՀ հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

- 2. ՎՊՀ կանոնադրության 140-րդ հոդվածում «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե» բառերով:**